

УДК 32

Վ.Տ Հախվերդյան
ՋԱՎԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ
ԱՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր` ազգայնամոլություն, անհամասեռություն, արմատական, արտագաղթ, բազմաէթնիկ, բազմայնություն (բազմակարծություն), բախում, երկլեզու, էթնիկական խումբ, ժողովուրդ (ազգ), էթնոլարչակարգ, ժողովրդագրություն, ինքնաբավ, ինքնուրույնություն, ինքնորոշում, ինքնիշխանություն, ծայրահեղական, համաձայնագիր, համարկում (ամբողջացում), համընդգրկուն, համահավաք, ձուլել, միաբնակ, միաէթնիկ, միասեռ, նմուշակերպ, նույնականացում, վերնախավ, տարանցում, տարածաշրջան, տեղաբնիկ, տեղահանում, տեղաշարժ, տիտղոսակիր, ուժացում, փոխզիջողություն (համաձայնություն), օտարավախություն (օտարատյացություն):

Ключевые слова: шовинизм, неоднородность, радикальный, эмиграция, многоэтничность, плюрализм, конфликт, двуязычный, этническая группа, этнос, этнорежим, демография, автаркия (самодовлеющий), самобытность, самоопределение, олигархия, экстремистский, конвенция, интеграция, глобал, компакт, ассимиляция, монофизит, моноэтничность, однополый (гомогенный), модель, идентификация, элита, транзит, регион, аборигены (местный), депортация, миграция, титульный, отчуждение, консесус, ксенофобия.

Keywords: chauvinism, heterogeneity, radical, emigration, multiethnicity, pluralism, conflict, bilingual, ethnic group, ethnos, ethnic regime, demography, autarchy (self-contained), original, self-determination, oligarchy, extremist, convention, integration, global, compact, assimilation, monophysit, monoethnicity, unisexual (homogeneous), model, identification, elite, transit, region, aboriginal (resident), deportation, migration, tille, estrangement, counsesus, xenophobia.

Կոմպակտ ապրող բնիկ ջավախահայությունը ինքնությունը պահպանելու, արտագաղթը կանխելու նպատակով սեփական Ջավախք էթնոտարածքի վրա պետք է ձեռք բերի մշակութային ինքնավարություն` հայերենին ընդեռելով տարածաշրջանային լեզվի կարգավիճակ:

Միջէթնիկական կոնֆլիկտները լուծելու և քաղաքացիական հասարակությանն ինտեգրվելու համար Ջավախքում արմատավորել երկլեզու (բիլինգ-

վալ) կրթական համակարգ՝ օտար լեզվին վերապահելով օժանդակ դերակատարություն:

Արդի քաղաքական, կրթամշակութային հիմնախնդիրների անաչառ լուսաբանումը բխում է հայ-վրացական սերտ համագործակցության և բարեկամության վերականգնման հրամայականից:

Ներկա ուսումնասիրությունը նպատակ ունի էթնոկրթական նպատակամետ մոդելներով հանգուցալուծել «հայ-վրացական կնճիռը», կանխել օրեցօր խորացող ճգնաժամը, ջավախահայության¹ ուժացումն ու զանգվածային արտագաղթը: Հիմնահարցի շուրջ առկա տարաբնույթ մոտեցումները ապակողմնորոշում են միջազգային հանրությանը և հանգեցնում շահագրգիռ սուբյեկտների ոչ համակարգված գործելակերպին:

Վրաց պատմաբանները 387 թվականի տխրահռչակ պայմանագրով կատարված փոփոխությունների հիման վրա պնդում են, թե Գուգարքը միշտ եղել է Քարթլիի թագավորության կազմում [7, 69]:

Անառարկելի է Ա. Շիրակացու այն վկայությունը, որ թեպետ Գուգարքն այժմ Վիրքի կազմում է, վերցված է Հայաստանից [12, 297]: Ջավախքը Մեծ Հայքի Գուգարք նահանգի 9 գավառներից մեկն էր, իսկ Գուգարքը առաջին անգամ Վիրքին է միացել 387 թվականին [7, 67]:

1830 թվականին Էրզրումի ու նրա շրջակայքի հայերը զանգվածորեն գաղթել են Ջավախք:

20-րդ դարի 20-ական թվականներին Ջավախքը (նրա մի մասը), որպես էթնոտարածքային միավոր, Հայաստանին վերամիավորելու կամ Վրացական ԽՍՀՄ կազմում մեկ հայկական վարչական միավոր ստեղծելու մասին (Ալ. Բեկգադյան, Ալ. Մյասնիկյան) հորդորը մերժվել է վրացական պետական շրջանակների կողմից [7, 18 և 21]:

Վրաց պատմաբան Լեոնտի Մրովելի վկայությամբ, մինչ այդ Ջավախքն ամայի չի եղել, սուրբ Նինոն մ.թ. 3-րդ դարում Ֆոգայում՝ Փարվանա լճի ափին, հովիվների հետ խոսել է հայերեն: Ուստի երկրին ժամանակավորապես տիրելու և այլամերժության փաստը չի կարող հիմք ծառայել «սեփական տարածք» համարվելու համար:

Մամցխե-Ջավախքն զբաղեցնում է Վրաստանի տարածքի մոտ 10 տոկոսը, որտեղ բնակվում է վիրահայության ավելի քան կեսը, իսկ զուտ Ջավախքում, որն զբաղեցնում է Վրաստանի 3,7 տոկոսը, բնակչության 94-95 տոկոսը հայեր են [10.14, 14], այն այժմ կազմում է 125 հազար հայ (ոչ պաշտոնական տվյալներով՝ 145 հազար): Ջավախքը սփյուռք չէ, ջավախահայությունը սուբէթնոս է, որն ապրում է իր բնօրրանում՝ պատմական տարածքի վրա, ուստի ազգային անվտանգության պարտադրանքով դառնում է անհրաժեշտ

¹ Ջավախահայությունը Ջավախքում բնակվող հայերն են: Վրացահայությունը («Վիրահայությունը») ողջ Վրաստանում ապրող հայերն են: Այստեղ «վրացի» եզրույթն էթնանուն չէ:

տություն՝ Բարձրացնել Վրաստանի վարչատարածքային կազմում ինքնավարության կարգավիճակի տրամադրման հարցը: Հակառակ դեպքում ջավախահայությունը ոչ հեռու ապագայում կկորցնի իր էթնիկական դիմագիծը, կիստեզրվի վրացական մշակույթին՝ քաղաքացիական հասարակության ստեղծման պատրվակով: Այդ գործընթացը համապատասխանում է գլոբալ միտումների ընդհանուր տրամաբանությանը, քանզի անհնար է ինքնամեկուսացումը՝ ինքնաբավ համակարգի ստեղծմամբ: Էթնիկական բոլոր բաղադրիչները աստիճանաբար միախառնվում են միասնական քաղաքացիական ընկերակցության մեջ՝ էթնիկական նույնականությունը փոխարինելով քաղաքացիականով: Սակայն Վրաստանում տևականորեն էթնիկական ընկերակցության հաստատումը դժվար իրագործելի է, հատկապես էթնիկական փոքրամասնություններ ադրբեջանցիների և հայերի միջև, քանզի նրանց խմբային քաղաքական կողմնորոշումները և մշակութային պահանջները տարաբնույթ են: Բացի դրանից, արմատական էթնոսի անթաքույց, ոչ լատենտ ձևով իրականացվող նպատակադիր խտրականությունը ջավախահայության նկատմամբ չի կարող նպաստել համապետական գիտակցության ձևավորմանը: Էռնեստ Գելները տեղին է նշել. «Ազգերի մի մասի բավարարվածությունը մյուս մասի հիասթափությունն է նշանավորում» [2, 10-11]:

Վրացական կողմը պարտավոր է հաշվի նստել պատմական անողորմ ճշմարտության հետ և զսպել ուժգնացած անհիմն հավակնությունները հայկական հնամենի տարածքների նկատմամբ: Անցել են այն ժամանակները, երբ լեզուն տարածելու և տեղանունները փոխելու միջոցով հնարավոր է վրացականացնել այն ամենը, ինչը հայկական է: Այժմ ոչ պաշտոնական տվյալներով հայերը Վրաստանում հաշվվում են 460 հազար, իսկ ըստ պաշտոնական աղբյուրների մոտ 250 հազար, այդ թվում Թբիլիսիում՝ 150 հազար [13, 348]:

Վրաստանում մինչև 2002թ. քանակով երկրորդ տեղն զբաղեցնում էին հայերը (437,2 հազար), իսկ ռուսները (341,2 հազար)՝ երրորդ [14, 13]: Այժմ ադրբեջանցիների ծնելիության արագ աճը հնարավորություն է տվել այդ էթնոդավան խմբին զբաղեցնելու առաջին տեղն (6,5%) ազգային փոքրամասնությունների շարքում, իսկ հայերը՝ երկրորդ (5,7%) [14, 13]: 2002թ. տվյալներով Վրաստանում ապրում են մինչև 284,8 հազար ադրբեջանցիներ, սակայն վերջիններս համոզված են, որ իրենք կես միլիոն են և նույնիսկ ավելին [9, 18]:

Ադրբեջանցիները հավաքական կերպով բնակվում են Քվեմո-Քարթլիի նահանգում, հիմնականում Մառնեուլիի, Գարդաբանի, Բոլնիսի և Դմանիսի շրջաններում: 2002թ. մարդահամարի համաձայն՝ այդ նահանգի բնակչությունը եղել է 497530 մարդ, որից 45,1 տոկոսը ադրբեջանցիներ են, 44,7 տոկոսը վրացիներ են, 6,4 տոկոսը՝ հայեր [6, 7]: Հայտարարություններ են հնչում հատուկ Շարժում ստեղծելու մասին, որի նպատակն է Վրաստանից անջատել Քվեմո-Քարթլին և որպես այդ գործընթացի սկիզբ՝ առաջ է քաշվելու ադրբեջաներենին տարածաշրջանային լեզվի կարգավիճակ տալու հարցը:

Եթե Վրաստանում հայերը համարվում են ազգային փոքրամասնություն, ապա համասեռ Ջավախքում ազգային մեծամասնություն են: Այստեղ տեղին է մեջբերել ԵԱՀԿ-ի Գերագույն հանձնակատար Մաքս վան Դեր Ստուլի բնորոշումը. «...փոքրամասնությունը խումբ է, որը բնութագրվում է լեզվական, էթնիկական կամ մշակութային այնպիսի առանձնահատկություններով, որոնք նրան տարբերակում, զատում են մեծամասնությունից: Երկրորդ՝ փոքրամասնությունը խումբ է, որը սովորաբար ձգտում է ոչ միայն պահպանել իր ինքնատիպությունը, այլև այն վառ կերպով դրսևորել» [3, 165]:

Էթնիկական խտրականության արդյունքում Ջավախքը հայաթափվում է, լոկալ արմատական ազգի միգրացիան դառնում է ազգային անվտանգության խնդիր: Ավելին, տեղի է ունենում թուրք-ադրբեջանական տարրի վերաբնակեցում, որոնց մինչև 2011թ. վերաբնակեցման հարցը եղել է Եվրախորհրդին Վրաստանի անդամակցության նախապայմաններից մեկը: 400 հազար թուրք-մեխեթցիների տարածաշրջան վերաբնակեցնելը Վրաստանի իշխանությունների ժողովրդագրական իրավիճակը փոխելու մտադրությունն է, որն սպառնում է միջէթնիկական և միջկրոնական հարաբերություններին:

20-րդ դարի սկզբներին բազմազգ Վրաստանն ինքնապաշտպանական բնագործ ձեռնամուխ եղավ մշակել միաէթնիկ ազգային պետության ստեղծման նախագիծ, որն ազգայնամուլական դրսևորում է՝ էթնիկական փոքրամասնությունների իրավունքների ոտնահարմամբ բազմազգ պետությունը դարձնել միաէթնիկ, այլ կերպ՝ ձուլել ազգը և պետությունը:

Միջազգային պրակտիկայում մոնոէթնիկ համարվում է այն պետությունը, ուր բնակչության 95 և ավելի տոկոսը կազմում է մեկ էթնոսի ներկայացուցիչներ (Իսլանդիա, Նորվեգիա, Պորտուգալիա, Ալբանիա, Մալթա, Յամայկա, Եմեն, Հունգարիա): [17, 54]

Գ.Տ. Տավադոլը գտնում է, որ ազգային պետությունն էթնիկական տարածքի հիմքի վրա կազմավորված էթնոսի (ազգի) պետություն է և մարմնավորում է ժողովուրդների քաղաքական անկախությունն ու ինքնուրույնությունը: [16, 275]

Միաէթնիկ կառուցվածք ունեցող հասարակարգերում ժողովրդավարացման համար ստեղծվում են ավելի բարենպաստ պայմաններ, քան էթնիկական անհամասեռության դեպքում: Էթնիկական կոնֆլիկտները Վրաստանում հանգեցրել են ավտորիտար էթնովարչակարգի հաստատմանը, որը ոչ դյուրին է դարձնում, այսպես կոչված, բազմաէթնիկ ժողովրդավարությունը, որչափով նրա հիմքում առկա է միջխմբային հակասությունը: Այդ մասին վկայություն են տալիս նույնիսկ միջազգային կառույցները՝ ԱՄՆ-ի պետ-դեպարտամենտը, Եվրախորհրդի հակաճգնաժամային խումբը: Ջավախքում վտանգվում է կրթամշակութային տիրույթը, արագ տեմպերով փակվում են հայկական դպրոցները, կրճատվում են հայոց լեզվի դասաժամերը և ավելացվում վրացերենը, արգելվել է դասավանդել «հայոց պատմություն» առարկան,

փոփոխվում են տեղանունները: 2005 թվականին Վրաստանում ընդունվել է «Հանրային կրթության մասին» օրենք, ըստ որի (հոդված 4.3)՝ «Վրաստանի քաղաքացիները, որոնց մայրենի լեզուն վրացերենը չէ, իրավունք ունեն ամբողջական ընդհանուր կրթություն ստանալու մայրենի լեզվով», սակայն մոլեռանդորեն հող է նախապատրաստվում համավրացական կրթական համակարգին անցնելու համար, ինչն արդեն մասամբ գործնականորեն տեղի է ունեցել: Ավելի քան 90 տոկոս հայերով բնակեցված տարածքում պարտադրվում է պետական լեզուն, արագացվում հայերի վրացականացման գործընթացը [11, 60.8, 142]: Հանրապետությունում անցկացվում է ուսուցիչների և հանրակրթական դպրոցների տնօրենների պաշտոններին հավակնող թեկնածուների վրացերեն լեզվի թեստավորում: Պատճառաբանվում է, թե առանց վրացերենի իմացության անհնար է ինտեգրվել վրացական պետությանը: Հայերը չեն անտեսում պետական լեզուն՝ վրացերենը, քանի որ բոլոր պաշտոնական փաստաթղթերը վրացերեն լեզվով են:

Համաշխարհային քարտեզագրության մեջ «Վրաստանը» որպես երկիր նշվում է միայն 15-րդ դարում: Մինչ այդ Վրաստանի շրջանում նշված են Կոլխիս, Իբերիա և Մենգրելիա երկրները [1, 12]: Հայերն այլ ժողովուրդների հետ համահավասար մասնակցություն են ունեցել վրացական պետության կայացմանն ու բարգավաճմանը: 5-րդ դարի հայոց հոգևոր մշակույթի ծաղկուն անդաստանի հիմնադիրը՝ Մեսրոպ Մաշտոցը, այբուբեն ստեղծեց նաև բախտակից վրացիների համար: Հայերը քվեարկել են Վրաստանի անկախության օգտին՝ ազգային փոքրամասնությունների իրավունքները երաշխավորող սահմանադրության հիմքերով:

1995թ. Ստրասբուրգում ընդունվել է ազգային փոքրամասնությունների պաշտպանության կոնվենցիա (համաձայնագիր), ըստ որի՝ համախումբ ապրող էթնիկ բնակչությունն իր պատմական տարածքում իրավունք ունի առնվազն լեզվական և մշակութային ինքնությունության, դրան ավելացրած մշակութային կապը իր մայր պետության հետ, թեպետ այն ինքնակազմակերպման կենսունակ մոդել չէ, քան քաղաքական միավորի ստեղծումը:

Միջազգային փորձը ցույց է տվել, որ այն երկրներում, ուր ազգային փոքրամասնությունները կազմում են 20 տոկոս, իրավունք ունեն որպես երկրորդ տարածաշրջանային լեզու համարել իրենց մայրենին: Աշխարհի 20-30 երկրներում 20 տոկոս հավաքական ապրող ազգային փոքրամասնությունների լեզուները տարածաշրջանային լեզուների կարգավիճակ ունեն [4]: Իսպանիայի և Իտալիայի սահմանադրություններում կան հոդվածներ, որոնք երաշխավորում են ազգային փոքրամասնությունների լեզուների պահպանման և զարգացման պետական աջակցությունը: Ֆինլանդիայում շվեդական փոքրամասնության (շուրջ 6%) լեզուն հայտարարվում է ևս պետական [17, 50]: Սա բացառիկ երևույթ է, որը բացատրվում է պատմական դրդապատճառներով, քանզի տևա-

կան ժամանակ Ֆինլանդիայում շվեդական լեզուն համարվել է կրթամշակութային լեզու:

Մայրենի լեզվի հիման վրա հանրակրթության ապահովումը ոչ միայն ազգային փոքրամասնության ընդհանրական ինքնության պահպանման ու խորացման, այլև երկրի ներքաղաքական կայունության և լեզվի հիմնախնդրի ժողովրդավարական լուծման գրավականն է:

Դպրոցներն ավարտողներին տալիս են վաուչեր Երևանում ուսումը շարունակելու համար, սակայն ատեստատը վերապահվում է միայն Վրաստանում սովորողների համար: Պետությունը չի սուբսիդավորում այն դպրոցներին, որոնցում աշակերտների թիվը 700-800-ից պակաս է:

Ձավախքում դպրոցների հանրություններին ոչ միայն արգելում են մասնակցել եկեղեցիների՝ Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հոգեհանգստյան պատարագին և միջոցառումներին, այլև Վրաստանի իշխանությունները մինչև այսօր չեն ճանաչել հայերի ցեղասպանությունը՝ մտավախություն ունենալով վատթարացնել հարաբերությունները Թուրքիայի հետ:

Երկար պայքարից հետո վերջերս Քաղաքացիական օրենսգրքով Հայ Առաքելական սուրբ եկեղեցին և ևս կրոնական 5 ուղղություն Վրաստանում իրավաբանական կարգավիճակ ստացան: [5]

Հայ Առաքելական եկեղեցիները, հայկական շենք-շինությունները որպես սեփականություն չեն տնօրինվում հայ էթնոսի կողմից, դրանք Վրաստանի օրենքներով գտնվում են վրաց ուղղափառ եկեղեցու և վրացական պետության հովանավորության ներքո:

Վրաստանում անկախության տարիներին օլիգարխների շարքում ազգությամբ հայեր գրեթե չկային: Այժմ երկրում կապիտալ ներդրումների դաշտը բավականաչափ նպաստավոր է դարձել նաև հայ ներդրողների համար: Այսպես՝ 2010թ. պաշտոնական տվյալներով Վրաստանում վերագրանցվել է 103 հայկական ընկերություն, և վերջերս ստեղծվել է հայ գործարարների միություն [7,341]:

Համագործակցության ծիւեր են երևում նաև Վիրահայոց թեմի հոգևոր կառույցի հետ:

Վրաստանի ժողովրդավարության գործընթացին պատնեշում է նաև երկրի կառավարմանը վիրահայության գրեթե բացակայությունը: Վրացական վերնախավը (էլիտա) ազգայնամոլական քաղաքականությամբ երկրի կառավարման համակարգից դուրս է մղում ազգային փոքրամասնություններին, անհամաչափություն ստեղծում իշխանական վերնախավում: Այժմ, ոչ պաշտոնական տվյալների համաձայն, պետական համակարգում հայերի թիվը 1-2 տոկոսից չի անցնում: Այս մոտեցումը բացատրվում է հայերի իբր պետական լեզվի չիմացությամբ: Ավելին՝ հայ մասնագետը Վրաստանում համեմատաբար քիչ է վարձատրվում:

Վրաստանում պաշտոնապես գրանցված են մինչև 67 հայկական ՀԿ-ներ, թեպետ իրականում ակտիվ գործում են դրանցից մի քանիսը: Դրանք կատարում են ազգապահպան գործառույթ և հիմնականում գործում են տեղի սուղ միջոցների հաշվին:

Վրաստանն ինտեգրվում է Եվրամիությանն ու ՆԱՏՕ-ին: Վրաստանը ՌԴ-ի հետ բախման արդյունքում ոչ միայն կորցրել է Հարավային Օսիան և Աբխազիան, այլև դատապարտվել է երկարաժամկետ կոնֆլիկտային գոտու կարգավիճակին, որը լուրջ սպառնալիք է Թբիլիսիի էներգետիկ քաղաքականությանը:

Վրաստանը դիվանագիտական կապերի մեջ չի մտնում այն տերությունների հետ, որոնք ճանաչում են Հարավային Օսիայի և Աբխազիայի անկախությունը:

Թուրքիայի և Ադրբեջանի հետ Վրաստանի անհեռատես ռազմավարական բնույթի հարաբերությունները, նրա գործուն մասնակցությամբ իրականացվելիք մի շարք տարածաշրջանային ծրագրերը և Հայաստանի Հանրապետության շրջափակումը չեն բխում մեր շահերից:

ՀՀ իշխանությունները ծավալում են հավասարակշռված քաղաքականություն, քանի որ հարևան երկրից մենք գտնվում ենք տարանցիկ ուղեհաղորդակցության կախվածության մեջ:

Ջավախահայության ինքնապաշտպանական ավանդական մեխանիզմները խոր արմատներ չունեն՝ ի համեմատություն Սփյուռքի համայնքների, քանի որ ապրելով սեփական տարածքում և մայր երկրի հարևանությամբ՝ քիչ է անհանգստացնում ուժացման վտանգը:

Այսուհանդերձ, ջավախահայության ազգային ինքնորոշման (ոչ անջատողական ծրագրով) պահանջը վրաց ժողովրդի կոշտ գործելակերպի արգասիք է՝ տնտեսական շահագործում, քաղաքական ճնշում, ազգային հալածանք, իրավազրկում, ազգի ուղղակի ինտեգրում և ուժացում:

Ծրագրավորված առաքելություն իրականացնելու մղումով 1997 թվականից Վրաստանում գործում է ազգային փոքրամասնությունների հարցերով ԵԱՀԿ-ի գերագույն հանձնակատարի գրասենյակը [3,115], որը հիմնականում զբաղվում է Մամցխե-Ջավախքի շրջանի հայերին առնչվող խնդիրների հանգուցալուծմամբ և այդ տարածաշրջանում լարվածության կանխարգելմամբ:

1980-ականներից Արևմուտքում արագ զարգանում են բազմամշակութային կրթության վերաբերյալ տեսություններն ու մեթոդաբանական մոտեցումները:

Այն երկրներում, որտեղ ժողովրդագրական կազմը բազմաէթնիկ է, առաջարկվում են կրթական տարբեր մոդելներ:

Ամերիկյան «ձուլող կաթսա» ռազմավարության փոխարեն՝ շրջանառության մեջ մտցվեց «ամերիկյան աղցան» արդիական հայեցակարգը, այլ կերպ՝

ներդրվեց բազմալեզու կամ երկլեզու (բիլինգվալ) կրթական համակարգը, որը դիտվում է միջերկրային հակամարտությունների հաղթահարման մոդել:

Երկլեզու բովանդակային կրթությունը բազմաթիվ հասարակություններում թույլ է տալիս ինտեգրվել այդ հասարակությանը՝ պահպանելով ազգային ինքնությունը:

Երկլեզու կրթության արտասահմանյան փորձն ունի 4 մոդել, որոնք վերաբերում են օտար լեզվի կիրառման տարիքային շեմին [18]:

1. Ռադիկալ (ծայրահեղական) մոդել. ենթադրում է առաջին դասարանից սկսած աշակերտների կրթության կազմակերպում ոչ մայրենի լեզվով:
2. Անցումային լեզվական մոդել. ենթադրում է սովորողների աստիճանական նախապատրաստում ոչ մայրենի լեզվով ուսումնառությանը՝ առարկաների դասավանդման թվի ավելացման ուղիով:
3. Լեզվի խորացված ուսուցման մոդել. ենթադրում է բոլոր կամ մի շարք առարկաների դասավանդում միաժամանակ երկու՝ մայրենի և օտար լեզուներով:
4. Լեզվական գոյատևման մոդել, որի համաձայն՝ բոլոր առարկաները դասավանդվում են մայրենի լեզվով, իսկ օտար լեզվին վերապահվում է օժանդակ դերակատարություն:

Առաջին երկու մոդելներն անընդունելի են, քանի որ հանգեցնում են ազգային ինքնության՝ կորստին: Վերջին երկու մոդելները կարելի է փորձարարական մակարդակով կիրառել Միջուրքի որոշ գաղթօջախներում, որտեղ ազգային կրթությունը վտանգված է: Նպատակահարմար է կիրառել երկլեզու կրթության բովանդակային տիպը՝ երկու լեզվով կրթական գործընթացի կազմակերպումը:

Էթնիկական փոքրամասնություններն ըստ իրենց նպատակադրումների կարելի է դասակարգել հետևյալ խմբերի.

1. Պյուրալիստական խումբը ձգտում է պահպանել իր էթնիկական ինքնությունը, սակայն հասարակության սոցիալական ինտեգրման գործունեությանը ցուցաբերում է ակտիվ մասնակցություն:
2. Ասիմիլացվող (ձուլվող) խումբը հոգ չի տանում իր էթնիկական ինքնության պահպանման մասին:
3. Անհանդուրժող-մարտնչող խումբը սեփական էթնիկական ինքնությունն է թմբկահարում և ձգտում է լրիվ քաղաքական անկախության:
4. Քաղաքացիական և սոցիալական ինտեգրմանը մասնակցող խումբ, որը ձգտում է ունենալ առնվազն մշակութային անկախություն կամ տվյալ պետության վարչատարածքային կազմում ինքնավարություն:

Ազգային մշակութային անկախությունը ջավախահայությանը հատուկ օրենսդրական ակտերով թույլ է տալիս օգտվել իր մշակութային արժեհամակարգից, դավանաբանական քարոզչությունից, զարգացնել իր լեզուն հրապարակային և պաշտոնական ոլորտներում, ուսումնասիրել հայոց պատմությունը, ստեղծել ազգային միություններ, խորացնել մշակութային, գիտակրթական կա-

պէրը հայկական համայնքների, մայր հայրենիքի հետ: Հիմնախնդրի համանման լուծումը բնավ չի նսեմացնում մյուս էթնիկական փոքրամասնությունների իրավունքները:

Հայկական գործոնն առավել չափով է անհանգստացնում վրաց հասարակությանը և ծնում հակահայկական տրամադրություններ:

Այսուհանդերձ, Վրաստանում հայ-վրացական հարաբերություններում սկսվում է նոր քաղաքական շրջափուլ: Ռուսական դաշնային կապիտալը հոսում է Վրաստան, որը հետապնդում է քաղաքական նպատակ՝ ուժեղացնել վերահսկողությունը այդ երկրի նկատմամբ: Այդ կոնսետուսը ձեռնառու է նաև Հայաստանի Հանրապետությանը: Վրաստանի իշխանություններն սկսել են անտեսել Ադրբեջանի հետ ՀՀ-ի հարաբերությունների բարդացումը, ռուս-վրացական հարաբերությունների վերականգնման և զարգացման գործում աջակից են տեսնում հարևան երկրին՝ Հայաստանի Հանրապետությանը:

Բազմաէթնիկ հասարակության մեջ փոքրամասնությունների ինտեգրման գործընթացը կրնա ընթանա բնականոն, առանց լարվածության, եթե այն ուղեկցվում է նրանց մշակութային, լեզվական, կրոնական առանձնահատկությունների պահպանմամբ, արժեքային համակարգի բազմազանության ճանաչմամբ, հասարակական կյանքին ակտիվ մասնակցության ապահովմամբ, ինտեգրված բազմազգ վերնախավի ձևավորմամբ:

Ջավախահայության էթնոքաղաքական իրավիճակը պահանջում է այնպիսի բազմամշակութային կրթական տեսական մոդելի մշակում, որը, հենվելով ազգապահպան մեծ ներուժ ունեցող միջազգային փորձի վրա, թույլ կտա հասնել գոնե մշակութային ինքնավարության:

В. Т. Ахвердян

Проблемы армян Джавахка в современных условиях

С целью сохранения самобытности, предупреждения эмиграции компактно проживающих армян-аборигенов Джавахка на своей моноэтнотерритории должны приобрести культурную самоидентификацию (автономию) — предоставляя армянскому языку региональный статус.

Для решения межэтнических конфликтов и интегрирования в гражданское общество необходимо укоренить в Джавахке двуязыковую (билингв) образовательную систему — предоставляя подсобную роль иностранному языку.

V. T. Hakhverdyan
The Problems of the Armenians in Javakhk Nowadays

In order to keep the originality, preventing the emigration the Armenian-aboriginal of Javakhk, living compactly on their monoethnoterritory must acquire cultural self-identification (autonomy), giving the Armenian language a regional status.

For the solution of interethnic conflicts and integration into the civil society, the bilingual educational system must be based in Javakhk, giving additional role to a foreign language.

Գրականություն

1. Գալչեան, Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ, Եր., 2005, 271 էջ :
2. Գելիներ Է., Ազգերը և ազգայնականությունը, «Հայաստան» Եր., 2003, 172 էջ :
3. Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (Պատմությունը, գործունեությունը և հեռանկարները), Ա. Հարությունյան, Եր., «Անտարես», 2006, 300 էջ:
4. Իրավունք, 26-29 հոկտեմբերի, 2007:
5. Իրավունք, 18-21 մայիսի, 2012:
6. Հայկական ժամանակ, օրաթերթ, 4 մայիսի, 2013, էջ 7:
7. Հայոց հյուսիսային դարպասները. Ջավախք, Լոռի, Նյութերի ժողովածու, 8 (կազմ. Վ. Սարգսյան), Եր. «Միտք», վերլուծական կենտրոն, 2012, 440 էջ:
8. Հանրային կառավարում, 2-3, «Պետական ծառայություն», Եր., 2011, 183 էջ:
9. Հանրապետական, ՀՀ կուսակցություն, թիվ 1, 2008, 44 էջ:
10. Ջայն վիրահայոց, «Վիրահայերի միասնություն», ՀԿ պաշտոնաթերթ, թ. 26, փետրվար, 2007:
11. Մինասյան Ս., Վրաստանի էթնիկական փոքրամասնություններ, Եր., 2006, 172 էջ:
12. Շիրակացի Ա., Մատենագրություն, Եր., 1979, 398 էջ:
13. Վարդանյան Թ., Թիֆլիսի հայ համայնք. նոր մարտահրավերներ, հիմնախնդիրներ, Հայոց հյուսիսային դարպասները, Ջավախք, Լոռի, Նյութերի ժողովածու, 8, Եր., «Միտք», 2012, 440 էջ:
14. Минасян с., Этнические меньшинства Грузии: Потенциал интеграции на примере Армянского населения страны, Ер., «Еркир», 2006, с. 172.

15. Мухелишвили Д., Из исторической географии Восточной Грузии, Тбилиси, 1982, 101 с.
16. Тавадов С. Т. Этнология, М., 2002, 352 с.
17. Шабает Ю.П., Садохин А. П. Этнополитология, Учеб. пособие, М., Юнити-Дана, 2005, 319 с.
18. Экспертная оценка основных документов, регламентирующих введение билингвального образования в школах с русским языком обучения в Латвийской Республике. <http://skola.ogreland.lv/rusjaz/psihol/private/psih015.htm> .

Տեղեկություններ հեղինակի մասին

Հախվերդյան Վարդան Տաճատի - փիլ. գիտ. թեկն., դոցենտ, Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ

Տրվել է խմբագրություն 17. 06. 2013.